

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԵՐՐՈՐԴ ՆԻՍՏ

ՍՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

12.04.2010թ.

Ժամը 12:30

Նիստը վարում են Երևանի քաղաքապետ Գ. Բեգլարյանը և քաղաքապետի առաջին տեղակալ Տ. Մարգարյանը:

Գ. Բեգլարյան.

- Ընդմիջումն ավարտվեց, անցնում ենք մեր շատ սպասված հարց ու պատասխանին: Հարց կտան 17 հոգի: Առաջին հարցը կտա Նաիրա Նահապետյանը: Խնդրեմ:

Ն. Նահապետյան.

- Հարգելի պարոն քաղաքապետ, հարգելի գործընկերներ, պարո՛ն քաղաքապետ, հարցն ուղղում եմ Ձեզ.

Պաշտոնավարության առաջին իսկ օրվանից Երևան քաղաքում ավելացել է արտաքին լուսավորությունը 9216 լուսատուով, որը շատ ողջունելի է, բայց ժամը 24:00-ից հետո անջատվում է բակային և երկրորդական փողոցների լուսավորությունը, որը հարիր չէ մեր քաղաքին: Ես հարցս ուղղում եմ Ձեզ, ի՞նչ առաջարկներ, ի՞նչ նախագծեր ունեք, որ մենք կարողանանք ամբողջ 24-ժամյա ռեժիմով Երևան քաղաքը լուսավորել: Ես գիտեմ, որ լուսավորության գումարները թանկ են և բարձր են նստում քաղաքապետարանի բյուջեի վրա. դա կազմում է մոտ 900 մլն դրամից ավելի, և կցանկանայի առաջարկություն ներկայացնել, որ քաղաքապետարանը որոշեր կա՛մ սեփական միջոցներով արտադրել էլեկտրաէներգիա, կա՛մ փոխարինվեր նոր ալտերնատիվ էներգիայի հետ կապված

լուսամփոփներով, որ այսօրվա վիճակով 30-40 տոկոս խնայողություն է տալիս:
Շնորհակալություն:

Գ. Բեզարյան.

- Շնորհակալություն հարցի համար:

Տիկին Նահապետյան, մենք անցած տարի, երբ սկսեցինք բակային աշխատանքները, Երևան քաղաքում կային բակեր, որոնք քսան տարուց ավելի չէին լուսավորվել: Բոլորս գիտենք, որ այդ 9600 լուսատուները տեղադրվեցին, և բակերը լուսավորվեցին: Այսօր մնացել են այն հատվածները, որոնք գլխավոր փողոցները կապում են բակերին: Այս տարի բյուջեով, դուք ինքներդ հաստատել եք, որ լուսավորությունը և բակային ասֆալտապատումը շարունակվի, որ կարողանանք ավարտել աշխատանքները: Միանգամից առաջացան խնդիրներ, որովհետև մենք գումարներ ենք ներդնում բյուջեից՝ լուսավորում ենք ամբողջ քաղաքը (դա երևանցու այսօրվա պահանջն է, և մենք պետք է դա անպայման ապահովենք), սակայն գուզահեռ աճում էին լուսավորության վճարները: Մեկ տարվա ընթացքում մոտ 250 մլն դրամի չափով ավելացել են լուսավորության գումարները: Խնայողություն ապահովելու նպատակով մենք մի քանի մոտեցում ենք մտածել և փորձում ենք դրանք կիրառել.

1. Մենք փորձելու ենք ժամը 24:00-ից հետո քաղաքը չլուսավորել այնպես, ինչպես մինչ այդ ժամը լուսավորում էինք: Քաղաքը կլինի լուսավոր, բայց կաշխատի ամեն մի երրորդ լուսատուն. այստեղ մենք բավականին տնտեսում ենք ունենում: Արդեն մեկ ամիս է սկսել ենք, և մեր տնտեսումների արդյունքներն ակնհայտ երևում են: Բացի դրանից, ունենք լուսատուների տարբեր երկրների առաջարկներ: Բեյրութի փողոցում մենք տեղադրել ենք այդ լուսատուներից: Կան լուսատուներ, որոնց արտադրողները երաշխավորում են մինչև 60 տոկոս տնտեսում, բայց դրանք կիրառելի չեն Երևան քաղաքում, որովհետև Երևանում փոշին շատ է, այդ դիողային լույսերը 10-15 օր հետո համապատասխան լույս չեն տալիս: Մենք քննարկել ենք նաև արևային էներգիայով լուսատուների հարցը, որն իրեն չի արդարացնում և մերժվել է: Այսինքն՝ Երևանում չենք գտել համապատասխան առաջարկ, որպեսզի լուսատուները փոխարինենք նորերով: Մենք պետք է կարողանանք ժամը 24:00-ից հետո տնտեսումներ անել անջատումների հաշվին, բայց այնպես, որ դրանից մեր

քաղաքացին չտուժի, այսինքն՝ քաղաքը լինի լուսավոր, քաղաքը լինի տեսանելի: Մեկ ամիս է արդեն մենք աշխատում ենք տնտեսումներով և բնակչության կողմից բողոքներ չունենք: Բացի դրանից, այդ հարցով ես դիմել եմ նաև Հանրապետության նախագահին և խնդրել նրա հանձնարարականը համապատասխան գերատեսչություններին, որ, եթե հնարավոր է, Երևան քաղաքի լուսավորությունը ավելի մեղմ գներով հաշվարկվի: Մենք այսօր, ինչպես բոլորդ գիտեք, վճարում ենք յուրաքանչյուր երևանցու նման՝ մինչև ժամը 23:00-ն ցերեկային տարիֆով, ժամը 23:00-ից հետո՝ գիշերային տարիֆով: Ես անհրաժեշտ եմ գտնում, որ մենք ունենանք նաև գիշերային հատուկ տարիֆ, բայց օրենսդիր դաշտում խնդիրներ կան՝ կապված սեփականատիրոջ պայմանագրի հետ: Սակայն ողջունելի է այն, որ բոլորն այս հարցին նայում են դրական, ինչպես այստեղ նստած յուրաքանչյուրս, և ապագայում մենք այդ տնտեսումներին ամեն գնով հասնելու ենք: Պատկերացրեք, եթե մենք ավելացնում ենք Երևան քաղաքի լուսավորությունը, ճեղքվածք ենք ունենում բյուջեում: Պետք է կարողանանք հասնել այն բանին, որ և՛ ամբողջ քաղաքը լուսավորենք, և՛ պահպանենք նախորդ տարվա 600 մլն դրամ տարեկան ծախսը: Դա մեզ համար փայլուն հաղթանակ կլինի: Շնորհակալություն: Եթե այս թեմայով կան այլ հարցեր, խնդրեմ:

Անդրանիկ Խալոյան.

- Նմանատիպ հարցով ես պետք է հանդես գայի, բայց խոսքը գնում է ոչ թե 24-ժամյա լուսավորությանը, այլ ընդհանրապես լուսավորված չլինելուն, մասնավորապես՝ Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Ազատության պողոտայի 3-րդ նրբանցքից դեպի Քանաքեռի կենտրոնական փողոցներ տանող փողոցների մասին է խոսքը:

Գ. Բեգլարյան.

- Կոնկրետ փողոցների մասին կպատասխանի համապատասխան վարչության պետը, որովհետև այսօր դուք ծրագրում պետք է նայեք՝ այդ փողոցը ներառվա՞ծ է, թե՞ ոչ: Եթե ներառված լինի, ուրեմն ոչ մի խնդիր չունենք, եթե ներառված չլինի, հաջորդ տարի անպայման կներառենք, որքանով մեզ թույլ են տալիս մեր բյուջեի հնարավորությունները նաև հաջորդ տարի, որ կարողանանք մինչև 2013 թվականը կոնկրետ չլուսավորված փողոց չունենալ: Իմ կողմից կա հանձնարարական այն մասին, որ ինչ որ սկսել ենք 2009 թվականի ապրիլ ամսին ասֆալտապատման և

լուսավորության ծրագրով, ավարտենք մինչև 2013 թվականը: Դրա համար այդ հարցերին դեռ չենք անդրադառնում, որովհետև կա կոնկրետ հանձնարարական և աշխատում ենք այդ ուղղությամբ: Այս տարվա բյուջեով գումարները հատկացված են, և փորձել ենք այնպես հատկացնել, որ այդ աշխատանքները վերջացնենք մինչև 2013 թվականը: Խնդրեմ տիկին Նահապետյան:

Ն. Նահապետյան.

- Շնորհակալություն պարոն քաղաքապետ: Այդ հարցը քննարկվել է և՛ քաղաքապետարանում, և՛ հանձնաժողովում, ամենաառաջին հարցն է Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ սակագնի փոփոխությունը, որը Դուք նշեցիք, շատ ողջունելի է: Երկրորդը՝ մի նախագիծ էլ կա, որ Երևան քաղաքն ունենա իր սեփական էլեկտրաէներգիա արտադրող ձեռնարկությունը, որը կունենա իր սակագինը և կկարողանա լուսավորության հետ կապված աշխատել: Այդ հարցն էլ զեկույցի ձևով կներկայացնենք Ձեզ: Եթե քննարկվի քաղաքապետարանում, շատ հաճելի կլինի:

Գ. Բեգլարյան.

- Դա մեզ համար կլինի հեքիաթային:

Ն. Նահապետյան.

- Ճիշտն ասած՝ Մոսկվան երկու մեծ հիդրոկայաններ ունի, որոնք զբաղված են լուսավորությամբ:

Գ. Բեգլարյան.

- Այսօր ջրմուղ-կոյուղու հետ պայմանագիր ունենք: Ֆրանսիական պետությունը ջրմուղ-կոյուղուն վարկ է հատկացրել Աերացիան վերանորոգելու նպատակով՝ կոնկրետ 24 մլն եվրո: Թեև այդ գումարներով, որի կեսն ենք ներդնելու Աերացիայի վրա, չենք կարողանում ստանալ հոսանք, բայց նախատեսել ենք այնպես, որ այդ գումարները չեն կորչելու: Եթե Աերացիային հոսանք ստանալու համար անհրաժեշտ է, օրինակ, 40 մլն եվրո, և եթե Աերացիան վերանորոգելուց հետո հաջորդ գումարը կարողանանք գտնել և ներդնել, հոսանք ստանալու համար արդեն մեզ անհրաժեշտ կլինի ևս 30 մլն եվրո: Այսինքն՝ այդ գումարը Ձեր առաջարկի սկիզբն է: Մեր խնդրանքով իրենք ընդառաջեցին և տրամադրված գումարի 10 մլն եվրոն կներդրվի Աերացիայի համար: Ընթացքում կբանակցենք տարբեր միջազգային

կազմակերպությունների հետ և եթե ամեն տարի 10 մլն եվրո կարողանանք ներդնել այստեղ, ապա 4 տարի հետո Երևանը կունենա հոսանք արտադրող ձեռնարկություն:

Ն. Նահապետյան.

- Ես կարծում եմ՝ դա Երևան քաղաքի ապագան է, որ մենք կարողանանք բյուջեի գումարները տնտեսել և այդքան մեծ գումարներ չտրամադրել լուսավորությանը և ունենանք պայծառ և լուսավոր Երևան քաղաք: Շնորհակալություն:

Գ. Բեգլարյան.

- Խնդրեմ:

Տ. Մարգարյան.

- Երկրորդ հարցը կտա «Բարգավաճ Հայաստան» խմբակցության անդամ Պողոս Փլավյանը:

Պ. Փլավյան.

- Շնորհակալություն: Պատրաստել եմ 3 հարց, 2-ը, ըստ էության, միանման են՝ վերաբերում են ճանապարհաշինությանը:

1. 2010 թվականի ծրագրով նախատեսել են Մամիկոնյանց և Հովսեփ Էմին ճանապարհահանգույցը միացնելու հետ կապված նախագծի պատրաստումը, որը, ըստ էության, Ասիական զարգացման բանկի ծրագրով շատ լավ է, որ պետք է իրականացվի, քանի որ Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջաններից հոսքերը կկարգավորի՝ Կոմիտասի և Քոչարի փողոցներում բեռնվաճառությունը կթուլացնի:

2. Բաղրամյան և Օրբելի փողոցների հանգույցում մենք այս տարի նախատեսել ենք կառուցել վերգետնյա անցում, ե՞րբ են սկսվելու աշխատանքները:

Գ. Բեգլարյան.

- Կպատասխանի Սամվել Դանիելյանը:

Ս. Դանիելյան.

- Մամիկոնյանց և Հ. Էմինի փողոցների միացման հարցը նախատեսված է ինչպես Երևան քաղաքի գլխավոր հատակագծով, այնպես էլ դրա հիման վրա մշակված Արաբկիր վարչական շրջանի գոտիավորման նախագծով: Մենք բավականին դիմումներ ունենք հարակից ուսումնական հաստատությունների կողմից և բնակիչների կողմից: Հարցը մանրամասն ուսումնասիրված է, դա միակ

հիմնական ուղին է, որը կարող է զգալիորեն թեթևացնել Կոմիտասի պողոտայի ներկայիս ծանրաբեռնվածությունը՝ ուղիղ կապ ստեղծելով Դավթաշեն վարչական շրջանի հետ: Այս տարի նախատեսված է դրա նախագծային աշխատանքների իրականացումը, խնդիրը քննարկվել է Ասիական զարգացման բանկի հետ ունեցած հանդիպումների ընթացքում, և նախնական պայմանավորվածություն կա երկրորդ տրանշի շրջանակներում այդ հարցը կոնկրետ քննարկման դնել:

Երկրորդը վերաբերում է Բաղրամյան և Օրբելի փողոցների խաչմերուկում անցումի կառուցմանը: Այդտեղ կան մի քանի տարբերակներ. քննարկվել է վերգետնյա անցում կառուցելու տարբերակը, բայց քանի որ կառույցը բավականին բարդ հանգույց է և փողոցների եռանկյունաձև հատված է, վերգետնյա անցում իրականացնելու դեպքում փակվում են Բաղրամյան պողոտայի ուղղակի հեռանկարները և՛ ներքևից վերև, և՛ հակառակ ուղղությամբ շարժվելու պարագայում: Այդ հատվածի համար ժամանակին քննարկվել է նաև ստորգետնյա անցում իրականացնելու հնարավորությունը և այդ նպատակով այնտեղ իրականացվող շենքի, որը գտնվում է շինարարության տարածքում, արդեն իսկ նախատեսված է այդպիսի հնարավորությունը՝ փողոցի ստորգետնյա հատվածից դիմային հատվածը դուրս գալու համար: Հիմա այնտեղ մենք հաշվարկներ ենք իրականացնում զուտ ֆինանսական համեմատություններ կատարելու տեսանկյունից, որպեսզի կարողանանք նախագծային վերջնական լուծումներն իրականացնել: Այնտեղ ոչ միայն բնակչության տեղափոխման խնդիր կա, այլ նաև այդ հատվածում տեղավորվելու է դպրոցի համալիրը:

Պ. Փլավյան.

- Պարոն Դանիելյան, պարզապես Մամիկոնյանց փողոցի հետ կապված հնարավորություն կա՞, որ հաջորդ տարի, միգուցե, կարողանանք ընդգրկել ծրագրում:

Ս. Դանիելյան.

- Այս տարի հունիսին կստորագրվի հիմնական հուշագիրը Ասիական զարգացման բանկի հետ, կճշտվեն առաջին տրանշում ներառված բոլոր ճանապարհային աշխատանքներն իրենց ծավալներով, որից հետո աշնանն արդեն կքննարկվի երկրորդ տրանշին հնարավոր մասնակցությունը:

Պ. Փլավյան.

- Օրբելի փողոցի հետ կապված այդ շենքը, որ կառուցվում է, մարդկանց խոստացել են, որ անցումը կլինի ստորգետնյա, բայց այս տարի բյուջեով հաստատում ենք վերգետնյա եռաճյուղ անցումը: Այսինքն՝ վերգետնյա անցումի կառուցումը դուրս է գալիս օրակարգից:

Ս. Դանիելյան.

- Ես ասացի, որ հիմա կատարվում է համեմատություն, որովհետև սովորաբար վերգետնյան ֆինանսական տեսանկյունից ավելի մատչելի է, քան ստորգետնյա անցումի կառուցումը:

Պ. Փլավյան.

- Այս տարի մարդիկ կկարողանան անցնել այդ տեղով, թե՞ ոչ:

Ս. Դանիելյան.

- Այս տարի կլուծենք նախագծային խնդիրները:

Պ. Փլավյան

- Այսինքն՝ այս տարի չենք կարողանա տալ:

Ս. Դանիելյան.

- Այո:

Պ. Փլավյան.

- Շնորհակալություն:

Պարոն քաղաքապետ, ես մեկ հարց՝ առևտրի և սպասարկման ոլորտի վերաբերյալ: Հարցը շատ վաղ պատմություն ունի և մինչև Երևանի համայնք ձևավորվելն այս հարցը կար. ըստ էության՝ կնճռոտ հարց է: Մենք ունենք բազմահազար քաղաքացիներ, որ փոքր և միջին բիզնեսով են զբաղվում՝ ժամանակավոր տաղավարներում և կրպակներում: Դրանց արդիականացման հետ կապված եմ ցանկանում հարցադրում անել: Քանի որ դեռ այն ժամանակներից առանձին փողոցների համար արդիականացման նախագծեր էին պատրաստվում, որն արդեն երկար ժամանակ է, որ համակարգային ընթացք չի տրվում, միգուցե առանձին լինում է, ես չեմ տիրապետում այդ ինֆորմացիային, բայց համակարգային լինեք, որ ընդհանուր քաղաքում ակտիվացնենք որոշակիորեն տնտեսական կյանքը և համապատասխանեցնենք այդ օբյեկտները քաղաքի ճարտարապետական տեսքին, ինչպես նաև դրանց մի սովոր զանգված գույքահարկի հարկման դաշտից են դուրս և դրանց կկարողանանք համապատասխանաբար ապահովել սեփականության

վկայականներով: Եթե կարելի է, այս հարցին պատասխանի քաղաքապետի տեղակալը: Շնորհակալություն:

Գ. Բեգլարյան.

- Խնդրեմ պարոն Արեյան:

Կ. Արեյան.

- Շնորհակալություն պարոն քաղաքապետ: Հարցն ունի այսպիսի նախապատմություն.

2006-2008թթ. համար ընդունվել էր Երևանի քաղաքապետի որոշում՝ Երևան քաղաքում առկա ժամանակավոր տեղադրված առևտրի կրպակների արդիականացման, ապամոնտաժման կամ ժամկետի երկարացման ծրագիր ապահովելու համար: 2009 թվականի մարտի 1-ի դրությամբ այս ծրագիրը չէր իրականացվել, այսինքն՝ սահմանված ժամանակահատվածը և իրականացման արդյունքները, պարոն քաղաքապետ և հարգարժան ավագանի, չէին համապատասխանում իրար: Պարոն Բեգլարյանի քաղաքապետ նշանակվելու հաջորդ իսկ օրը եղել է հանձնարարական՝ հաշվառել այս ուղղությամբ և, առհասարակ, անհատույց սեփականության իրավունքի վերականգնման ուղղությամբ Երևանի քաղաքապետարանում կուտակված բոլոր դիմումները: Քանի որ, կրկնում եմ, Ձեր ասած որոշման առկա արդյունքները և սահմանված ժամկետները չէին համապատասխանում իրար և նկատի առնելով քաղաքապետարանում կուտակված դիմումների քանակը և, ինչպես Դուք նշեցիք, հարցի շատ նուրբ և կնճռոտ լինելը, 2009 թվականի մարտի 31-ին ընդունվել է Երևանի քաղաքապետի որոշումը այս գործընթացի հետագա կարգավորման համար: Եթե Դուք ուշադրությամբ նայել եք այդ որոշումը, որոշման մեջ որոշակի կոնկրետ թվեր, ժամկետներ սահմանված չեն: Ի՞նչ էր իրենից ներկայացնում այդ որոշումը: Ամենից առաջ, նկատի առնելով քաղաքապետարանում կուտակված դիմումների քանակը և դրանց ընթացք չստանալու հանգամանքը, 1-ին կետով հանձնարարված էր քաղաքապետարանի աշխատակազմին գույքագրել դիմումները և ամբողջությամբ տրամադրել առևտրի և սպասարկումների վարչությանը:

2-րդ կետով նախատեսված էր հետևյալ պահանջը՝ առևտրի վարչությունը պետք է ըստ վարչական շրջանների /թաղային համայնքների/ գույքագրեր և

դասավորեր այդ որոշումները՝ ըստ ժամանակագրության՝ երբ է տրվել դիմումը և ինչ ընթացք է ստացել:

Հաջորդ կետով նախատեսված էր համապատասխան վարչական շրջանի ղեկավարի, այդ ժամանակ՝ համայնքի ղեկավարի հետ գույքագրել այդ դիմումները և, վերջապես, ճարտարապետության և քաղաքաշինության վարչության հետ նկատի առնել օբյեկտ առ օբյեկտ, դիմում առ դիմում: Առաջինը՝ դրա հետագա պահպանման նպատակահարմարությունը, վարձակալության ժամկետի երկարացման նպատակահարմարությունը և արդիականացման անհրաժեշտությունը: Այս աշխատանքներն ըստ էության կատարված են, պարոն քաղաքապետ:

1. Լուծված է առաջին հարցը՝ 1000-ից ավելի դիմումներ էին կուտակվել ժամկետների երկարացման համար: Մարդիկ ունեցել էին տաղավար, կրպակ, լրացել էր նրանց ժամկետը, ինչպես նաև ավտոտնակների ժամկետները: Պարոն Բեգլարյանի հանձնարարությամբ տրվեց ընդամենը մեկ ամիս ժամկետ՝ մեկամսյա ժամկետում գույքագրվեցին զուգահեռ նաև բոլոր ավտոտնակների դիմումները, և այսօր կարող եմ վստահաբար ասել, որ այդ խնդիրը, ըստ էության, քաղաքապետի հանձնարարությամբ կարգավորված է, առաջին մասով՝ ժամկետների երկարացման խնդիրը կարգավորված է, ըստ անհրաժեշտության քաղաքացին ժամկետի երկարացումը՝ հողային օրենսդրության պահանջների համապատասխանության դեպքում 2015 թվականը, որովհետև այդպիսին է օրենքի պահանջը 60-րդ հոդվածի սահմանափակումների հետ կապված:

Ինչ վերաբերում է Ձեր հարցի երկրորդ մասին, իսկապես շատ կնճռոտ հարց է՝ արդիականացնել այդ տաղավարները, թե՞ ոչ: Այս պահի դրությամբ գրեթե ամբողջ քաղաքը հաշվառված է և դասակարգված: Ամբողջությամբ արդիականացման ծրագիր է ներկայացվել Մամիկոնյանց, Գրիբոյեդովի և Ազատության պողոտաների հատվածներում: Պատրաստ են աշխատանքները գլխավոր ճարտարապետի հետ քննարկման համար, սակայն, պարոն Փլավյան, պետք է տեղյակ լինեք, որ կա Երևանի քաղաքապետի հանձնարարականը՝ իրապես վերանայելու ժամանակավոր կրպակների և ավտոտնակների տեղադրման հարցը մայրաքաղաքում: Հիմա մենք գլխավոր ճարտարապետի հետ քննարկում ենք այս որոշման առաջիկա կարգավորման և վերանայման հարցը:

Լուծումը հետևյալն է՝ այն, ինչը չի խանգարում մեր քաղաքաշինական հետագա կառուցապատման ծրագրերին, կարող է ենթարկվել արդիականացման, ինչ վերաբերում է մնացած կատեգորիաներին, որ կարող են խանգարել, անկախ ժամկետից, դրանց արդիականացումը քաղաքաշինական տեսանկյունից մենք գտնում ենք ոչ նպատակահարմար: Հարցն ունի սոցիալական խնդիր, Դուք նշեցիք այդ խնդիրը, այսօր որևիցե սոցիալական ցնցում չի առաջացրել այդ հարցը, որովհետև քաղաքապետի հանձնարարությունն է՝ որևէ սուբյեկտիվ, կոշտ և կնճռոտ դիրքորոշում չցուցաբերել: Հարցերը քննարկվում են անհատապես, և առաջիկա մեկ ամսվա ընթացքում մենք քաղաքապետին կներկայացնենք մարտի 31-ի որոշման և արդյունքները և հետագա ծրագրային բոլոր քայլերը:

Պ. Փլավյան.

- Շնորհակալություն պարոն Արեյան: Մեր հայկական ավանդական խառնվածքին բնորոշ է, որ մեկ այդպիսի տնտեսվարող սուբյեկտ մի քանի ընտանիք ևս իր հետ պահում է, և եթե 5000-6000 այդպիսի տաղավարներ կան, որ ամեն մեկը 15-20 մարդ է կերակրում և պահում է, մոտ մեկ միլիոնանոց մեր քաղաքի համար մարդկանց այդ բանակը մեծ և լուրջ թիվ կարող է առաջացնել: Միգուցե կլինեն օբյեկտներ, որոնք իսկապես չեն համապատասխանի, պետք է դրանց հարցերը լուծել՝ չնեղացնելով այդ մարդկանց, բայց այն մասերում, որտեղ համաձայնեցված է, օրինակ Գրիբոյեդովի, Մամիկոնյանց փողոցներում և Ազատության պողոտայում կարծես թե կրպակաշար է: Եթե հնարավոր է, այդ հատվածներում մարդիկ պարզ իմանան կոնկրետ 2011 թվականի հունվարին արդիականանալու է իրենց մասը, ավելի պատրաստված կլինեն ֆինանսապես, որովհետև արդիականացնելու համար էլ են պետք միջոցներ, շատ ողջունելի կլինի, որպեսզի ժամկետները ճշտվի, որ մարդիկ էլ իրենց անելիքներն իմանան, որ իրենց համար հստակ ժամանակացույցով տրվում է, և իրենք էլ պատրաստվեն՝ վարկ են վերցնում, կամ իրենց միջոցներով են անում: Շնորհակալություն:

Կ. Արեյան

- Լրացուցիչ, եթե թույլ տաք, պարոն քաղաքապետ:

Եթե չլիներ Երևանի քաղաքապետի, պարզ ասեմ, մարդասիրական որոշումը, Դուք գիտեք նախկին որոշումը բավականին խոցելի էր քաղաքաշինական տեսանկյունից, բայց աչքի առնելով այդ հանգամանքը, որ այստեղ կա քաղաքացու

կեցության խնդիր և նյութականի խնդիր, Երևանի քաղաքապետը 2009 թվականի մարտի 31-ին ընդունեց այս կարգավորող որոշումը՝ ամենից առաջ նկատի առնելով մարդու սոցիալական շահը, երևանցու սոցիալական խնդիրը: Այսօրվա զգուշավորությունն էր, ես կրկնում եմ՝ ոչ մի ցավեցնող դեպք, որոշում կամ նախագիծ Երևանի քաղաքապետի կողմից չի հաստատվել, դրա համար այս կարգավորող որոշումն ուներ այդ նպատակը, հակառակ դեպքում կարող էին ասել՝ 2006-2008թթ. ժամկետը սպառվել է և վերջ, բայց այդպես չարվեց: Երբ իրավիճակը ներկայացվեց քաղաքապետին, մենք նշեցինք, որ ժամկետը սպառվել էր, կարող էր քաղաքապետն ասել՝ նախկին որոշումը չեղյալ համարել և վերջ, բայց ընդունվեց զուտ մարդասիրական տեսանկյունից, քաղաքացու շահերից, երևանցու շահերից էլնելով այս որոշումը, և Դուք կարող եք կասկած չունենալ, որ ունենք հանձնարարական բոլորս՝ սկսած ինձնից մինչև վերջին մասնագետն այս սկզբունքով է առաջնորդվելու:

Պ. Փլավյան.

- Շնորհակալություն, այստեղ բոլորս էլ մարդասեր ենք, դրա համար էլ ընտրվել ենք:

Գ. Բեգլարյան.

- Ընտրությունները միայն մարդասիրության վրա չեն հիմնված. աշխատանքային կարողություն պետք է ունենալ, նաև կրթություն, նաև մոտեցում: Շատ լավ է մարդասիրությունը, բայց միայն մարդասիրությամբ պետություն չենք կարող կառուցել և զարգացնել:

Ուզում եմ երկու առաջարկ անել: Հարց ու պատասխանը շատ կարճ լինի, թե չէ մարդիկ իրենց հարցերը չեն հասցնի տալ:

Արդեն քանի անգամ միջին և փոքր բիզնեսին առնչվող ելույթներ եմ լսում, դրան պատասխանենք, որովհետև կարևոր են բոլորիս համար: Այսօր իրականում կան տաղավարներ, որոնք արդիականացնել ընդհանրապես չի կարելի, որովհետև մայթեր են փակում, անանցանելի դարձնում: Դրանք վաղուց պետք է ապամոնտաժվեին: Սակայն այսօր չեն ապամոնտաժվում՝ հաշվի առնելով համաշխարհային ճգնաժամը: Հաշվի ենք առնում, որ յուրաքանչյուր տաղավարից նվազագույնը 5 երևանցի է սնվում: Բայց դա էլ ես 100 տոկոսանոց ճիշտ չեմ համարում, որովհետև այդ չափորոշիչից բացի, մենք ունենք այլ խնդիրներ լուծելու՝ մայրաքաղաքի տեսք, անցանելի, լուսավոր մայթեր: Որովհետև բացի մեզանից,

ունենում ենք հյուրեր, զբոսաշրջիկներ, որոնց չենք կարող բացատրել այդ վատ տաղավարների գոյության փաստը, որոնք չեն ապամոնտաժվում միայն այն բանի համար, որովհետև մարդուն այլընտրանքային աշխատանքի վայր չենք կարողանում առաջարկել, որպեսզի մարդն իր ամենօրյա հացը վաստակի: Հաջորդ հարցը, պարոն Մարգարյան:

S. Մարգարյան.

3-րդ հարցը կներկայացնի Հանրապետական խմբակցության անդամ Աստղիկ Գևորգյանը:

Ա. Գևորգյան.

- Հարգարժան պարոն քաղաքապետ, հարգելի գործընկերներ, ավագանու նախորդ նիստում մենք հաստատեցինք նախադպրոցական հիմնարկությունների, մշակույթի, արվեստի օջախներին նվիրված բյուջե՝ ջեռուցման և վերանորոգման առումով: Մենք ողջունում ենք այդ առաջարկը և մեր մեջ անվանեցինք «Ապագա երևանցուն» նվիրված բյուջե, ամենայն խրախուսանքի արժանի է, ողջունելի են նաև քաղաքապետարանի և անձամբ Ձեր ջանքերը, պարոն քաղաքապետ, ծնելիության խթանմանն ուղղված վերջին միամսյակը, բազմազավակ մայրերին սատարելը:

Հարցս հետևյալն է՝ կա՞ն արդյոք հնարավորություններ, ֆինանսական հաշվարկներ՝ այսուհետև ևս ֆինանսական միջոցները, որքան որ հնարավոր են, ուղղել այդ երկու ուղղությամբ, որովհետև դա ազգային անվտանգության խնդիր է, առողջության խնդիր է, որովհետև մենք բոլորս գիտենք՝ այն խավար տարիների երեխաներն այսօր ինչ լուրջ պրոբլեմներ ունեն, այն հաշվով, որ մեր մանկապարտեզների երեխաները չհիվանդանան ջեռուցման պատճառով: Շնորհակալություն:

Գ. Բեգլարյան.

- Եթե թույլ կտաք, ես կպատասխանեմ:

Ասեմ, որ այս տարի մանկապարտեզների ջեռուցման ծախսերն ապահովվեցին աշխատակազմի աշխատանքի շնորհիվ անցած տարվա տնտեսումից, ֆինանսական ճիշտ հաշվարկից: Ձեր ֆինանսական մշտական հանձնաժողովի օգնությամբ կարողացանք հասնել դրան: Հաջորդ տարի սա լինելու է շարունակական: Այսօր հանձնարարական ունեն բոլորը, և ոչ միայն այս ոլորտում: Մենք, օրինակ, մայիսից սկսում ենք ասֆալտապատումը, բայց քաղաքաշինության վարչությանը

հանձնարարել էմ, որպեսզի իրենք 2011 թվականի ծրագրերը կարողանան շարունակական ներկայացնել, կիսատ ոչ մի գործ չթողնել ոչ մի ոլորտում: Ամենակարևորը, ինչպես նշեցիք, մեր ապագա սերնդի, մանկապարտեզների հարցն է: Մյուս տարի այս գումարները, որոնք այս տարի ծախսվում են ջեռուցում ապահովելու նպատակով, խնդրի լուծումից հետո կծախսվեն մանկապարտեզների վերանորոգման համար: Այսօր մենք մանկապարտեզներ ունենք, ուր երեխաներին տանել չի կարելի: Վերանորոգումների ուղղությամբ մենք աշխատում ենք և հաջորդ տարի մենք անպայման դրանք պետք է վերանորոգենք: Եթե մենք ուշադիր չլինենք մեր երեխաներին, վերաբերմունք ցույց չտանք մեր մեծերին, երիտասարդները ոչինչ չեն կարող անել: Շնորհակալություն:

Ա. Գևորգյան.

- Շնորհակալություն, պարոն քաղաքապետ, ուզում եմ արձանագրել, որ այս կարգի միջոցառումները, ձեռնարկները, որոշումները կոփման փուլում են, և երևանցին արդեն մոռացել էր, որ կարող է պատահի քաղաքային իշխանությունները ուշադրություն դարձնեն այս հարցերին, նկատի ունեմ նաև «Երիտասարդական» մետրոյի շրջակայքը, այսինքն՝ կամաց-կամաց մեր Երևանը վերադառնում է երևանցիներին: Շնորհակալություն:

Գ. Բեգլարյան.

- Ամենակարևոր հարցը՝ ես խնդրում եմ նաև ավագանուն և առաջարկում: Ես հայտարարել եմ, որ 10 և ավելի երեխաներ ունեցող ընտանիքներին Երևան քաղաքում բնակարաններ ենք հատկացնելու: Խոստացել եմ, որ առաջարկությամբ հանդես կգամ և ավագանին չափորոշիչներ կմշակի: Այսօր, մեր ունեցած տվյալներով, Երևան քաղաքում 10 և ավելի երեխաներ ունեն 15 ընտանիք: Այդ 15 ընտանիքին միանգամից հնարավորություն չունենք բնակարաններ հատկացնելու, բայց կհատկացնենք 2 տարվա ընթացքում: Մենք պետք է չափորոշիչներ մշակենք, կարողանանք հասկանալ՝ ում ենք առաջնություն տալիս: Երկու կարևոր չափորոշիչ ես ինքս կառաջարկեմ, մնացածը կարող եք դուք առաջարկել.

1. 10 և ավելի երեխաներից քանի՞սն են անչափահաս:

2. 10 և ավելի երեխաներ ունեցող ընտանիքը այս պահին քանի՞ քառակուսի մետր բնակարան ունի:

Սա շատ կարևոր է հաջորդականության համար: Մնացած բոլոր առաջարկները կլինդրեի, որ արվեն ավագանու հաջորդ նիստում: Ձեր կողմից լինի նախաձեռնություն: Հաջորդ ավագանու նիստին ես նախաձեռնությամբ հանդես եմ գալու բնակարաններ հատկացնելու հարցով: Շնորհակալություն, հաջորդը, պարոն Մարգարյան:

S. Մարգարյան.

- Հաջորդը՝ Իշխան Դարբինյան:

Գ. Բեգլարյան.

- Խնդրեմ, պարոն Դարբինյան:

Ի. Դարբինյան.

- Հարգելի գործընկեր, Երևան քաղաքի ավագանու «Բարգավաճ Հայաստան» խմբակցությունը բնակիչներից ստացել է ահագանգ՝ ըստ որի Երևանի որոշ վարչական շրջաններում սկսվել է համատիրությունների միավորման և խոշորացման գործընթաց: Ձեռնպահ մնալով գործընթացին որևէ գնահատական տալուց՝ կցանկանանք անդրադառնալ մեխանիզմներին: Առանց բնակիչների համաձայնության իրականացվում է համատիրությունների միավորում, ինչպես նաև բոլոր ուղղակի և անուղղակի միջոցներով ճնշում է գործադրվում մեկ կամ մի քանի շենքանի համատիրությունների վրա: Կցանկանայի իմանալ՝ արդյոք նման խնդիր կա՞ Երևան քաղաքի օրակարգում, և եթե կա, իմանալ այդ գործընթացի նպատակահարմարությունը: Շնորհակալություն:

Գ. Բեգլարյան.

- Պարոն Վարդանյան, այդ հարցին ես կպատասխանեմ:

Նախ մենք բոլորս գիտենք, որ համատիրությունների հետ կապված խնդիրներ ունենք: Համատիրության մասին օրենքը այսօր լիարժեք չի աշխատում: Այսօր գործնականում մենք տեսնում ենք, որ մեկ շենքով, երկու շենքով համատիրությունը արդյունավետ չի աշխատում: Դա տեսնում են նաև բնակիչները, որ համատիրության անդամ շենքերի թիվը 5-ից, 10-ից պակաս չպետք է լինի: Դա կոնկրետ մաթեմատիկա է, կարող եմ ներկայացնել: Այն գումարները, որոնք մեկ շենքից են հավաքում մեր համատիրության նախագահները, այդ գումարներով շենքի վրա ոչինչ չի արվում՝ վճարում են աշխատավարձ ու վերջանում է: Ծանրաբեռնվածությունն անցնում է համայնքին: Մենք պետք է հասնենք նրան, որ մեր բնակիչն իմանա, թե ծառայության

համար իր վճարած գումարները որտեղ ծախսվեցին, ինչքան ծախսվեցին և կոնկրետ վարչական շրջանը ինչով է մասնակցելու այդ համատիրության, այդ շենքի վերակառուցման և վերանորոգման հարցերում: Կան կոնկրետ ուսումնասիրություններ, այսօր համայնքի կողմից կառավարությունում կա առաջարկ, որպեսզի «Համատիրության մասին» օրենքը վերանայվի և փոխվի, որ կարողանանք օրենքում այդ կետն անպայման ունենալ, որ մեկ շենքով, երկու շենքով համատիրությունն իրեն չի արդարացնում: Դա չի բխում այսօրվա մեր բնակչի շահերից: Իսկ ինչ մնում է այն հարցին, որ կարող են բնակչի կամքին հակառակ գործել, ես բացառում եմ: Այդ ամեն ինչը մենք պետք է կարողանանք ճիշտ ներկայացնել, որպեսզի բնակիչն ինքը հասկանա, որ այն, ինչ առաջարկվում է համայնքի կամ վարչական շրջանի կողմից, հոգուտ իրեն է, հոգուտ շենքի պահպանման, որ բնակչի համաձայնությամբ մի քանի շենքեր միավորվեն, որ կարողանանք մենք էլ օգնել: Այսօր տարբեր վարչական շրջաններում այդ գործընթացը կա, բայց միայն և միայն բնակչի համաձայնությամբ, միայն և միայն վարչական շրջանի հետ համատեղ աշխատելով: Եթե հարցեր չկան, անցնենք հաջորդ հարցին:

S. Մարգարյան.

- Հաջորդ հարց տվողը Արման Մադաթյանն է:

Ա. Մադաթյան.

- Հարգարժան քաղաքապետ, հարգարժան գործընկերներ, 2009 թվականի սեպտեմբերի 23-ին Երևանի ավագանու որոշմամբ ստեղծվել է «Էրեբունի-Երևան» մշակութային հիմնադրամը:

«Էրեբունի-Երևան» մշակութային հիմնադրամը նպատակ է ունեցել Երևան համայնքում մշակել նախագծեր և իրականացնել ծրագրեր Երևանի պատմության, մշակույթի և արվեստի, զբոսաշրջության, երիտասարդության, քաղաքաշինության և բնապահպանության բնագավառում, աջակցել դրանց զարգացմանը, Երևանի պատմաճարտարապետական և պատմամշակութային պահպանմանը և օգտագործմանը, վերակառուցմանն ու վերականգնմանն աջակցելը, երիտասարդության ազգային ինքնագիտակցության բարձրացմանն ու հոգեղեն արժեքների կերտմանն օժանդակելը և այլն: Հարցս հետևյալն է՝ գործո՞ւմ է արդյոք

«Էրեբունի-Երևան» մշակութային հիմնադրամը և ինչպիսի ծրագրեր է իրականացրել մինչ այսօր:

Գ. Բեզլարյան.

- Հարցին կպատասխանի պարոն Մելքումյանը: Խնդրեմ, պարոն Մելքումյան: Պարոն Մելքումյան, խնդրում եմ հակիրճ:

Գ. Մելքումյան.

- Շնորհակալություն, պարոն քաղաքապետ: Ասեմ, որ անցած տարվա դեկտեմբերին պարոն Բեզլարյանի նախաձեռնությամբ ստեղծվեց մի աշխատանքային խումբ, արդեն «Էրեբունի-Երևան» մշակութային հիմնադրամը ստեղծվելուց հետո՝ ավագանու որոշմամբ, աշխատանքային խմբի առջև խնդիր դրվեց ուսումնասիրել որպես ծրագրային առաջին քայլ Էրեբունի ամրոցի բնակատեղի ամբողջ իրավիճակը, ուսումնասիրությունները կատարելու համար ստեղծվեց աշխատանքային խումբ. ընդգրկվեցին հայտնի գիտնականներ հանրապետությունում, մասնագետներ, քաղաքապետարանի մասնագետներ, ճարտարապետներ և այլ անձինք: Այնուհետև քաղաքապետի որոշմամբ հաստատվեց առաջնահերթ միջոցառումների ծրագիրը և հիմնական նպատակ դրվեց, որպեսզի վերականգնվի Էրեբունի բնակատեղին, Էրեբունին դառնա Երևան քաղաքի հիմնական այցեքարտերից մեկը և Էրեբունին դառնա գիտական, մշակութային, զբոսաշրջության կենտրոն: Եվ հաշվի առնելով, որ այն ունի նաև խոշորագույն ազգային արժեք և համաշխարհային պատմական արժեք: Այսօր քաղաքապետի կողմից հաստատված այդ ծրագրի համաձայն աշխատում է գիտնականների մասնագիտական խումբը, այս պահին ծրագիրն իրականացվում է մինչև 2018 թվականը, որպես առաջին փուլ հիմնական աշխատանքների և որպես առաջին փուլ կներկայացվի քաղաքապետի հաստատմանը: Այս պահին նաև մասնագետ ճարտարապետների կողմից գիտնականների մասնակցությամբ կատարվում են էսքիզային մշակման աշխատանքներ, որոնք նույնպես առաջիկայում կներկայացվեն քաղաքապետի հաստատմանը: Ուսումնասիրվել և ուսումնասիրվում է միջազգային փորձը, մասնավորապես Սանկտ Պետերբուրգի պատմական հուշարձանների պահպանության մասնագետների հետ մենք ուղղակի կոնտակտի մեջ ենք, նրանց փորձը նույնպես զուգահեռ ուսումնասիրում ենք: Այսքանը:

Ա. Մադաթյան.

- Շնորհակալություն, պարոն Մելքումյան:

Գ. Բեգլարյան.

- Ես ուզում եմ օգտվել քաղաքապետի իմ իրավունքից: Հանրապետական ավագանուց ներողություն եմ խնդրում և առաջարկում, որ հարցերը թույլ տանք «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը տա: Վերջացնելուց հետո Դուք կտաք: Հաջորդ հարցը՝ Գագիկ Գրիգորյան:

Գ. Գրիգորյան.

- Հարգելի գործընկերներ, գրանցել եմ 2 հարց, սակայն նպատակահարմար եմ գտնում առաջին հարցը հանել և շրջանցել առաջին հարցը: Սկսեմ երկրորդից:

2-րդ հարցս ուղղված է քաղաքապետարանի սպորտի և մշակույթի բաժնին: Դեռևս նոյեմբեր ամսին Շենգավիթ վարչական շրջանում գտնվող գեղասահքի դպրոցի աշխատակիցների կողմից գրավոր ահազանգ է ստացվել վերոնշյալ մարզադպրոցի փակման կապակցությամբ: Սակայն առ այսօր ոչ մի պարզաբանում չի հնչեցվել: Կցանկանայի տեղեկություններ ստանալ գեղասահքի դպրոցի ճակատագրի վերաբերյալ, մասնավորապես՝ ի՞նչ մեթոդով, և ո՞ւմ կողմից է որոշվել դպրոցը փակելու նպատակահարմարությունը: Տարօրինակ չէ՞, երբ 200 մլն դրամ ենք հատկացնում ևս մի սահադաշտ կառուցելու համար, սակայն գեղասահքի դպրոց ենք փակում: Շնորհակալություն:

Գ. Բեգլարյան.

- Հարցին ես կպատասխանեմ: Շատ հետաքրքիր հարց է տալիս ավագանին: Դպրոցը կարող էր փակվել, իհարկե, իմ կողմից, բայց դպրոցը չի փակվել: Ստուգումների արդյունքում պարզվեց, որ մի դպրոցում երկու տարի ցույց են տվել, որ սառցադաշտ է գործում, բայց սառցադաշտը չի գործել: 30 աշխատողի փոխարեն այդ դպրոցում պահվել է 90-ից ավելի աշխատող այն դեպքում, երբ սառցադաշտը չէր գործում: Այն, որ ցույց են տվել, թե սառցադաշտն աշխատում է, բայց չի աշխատել՝ դրա համար համապատասխան մարդիկ կենթարկվեն պատասխանատվության: Այսօր այդտեղ ստուգումները շարունակվում են: Ես խոստացել եմ, որ 2010 թվականին սառցադաշտը գործելու է: Ինչ վերաբերում է 200 մլն դրամին, ապա նախաձեռնողը եղել եմ ես՝ անցած ավագանու նիստում: Միայն է ընկալվել երևի, ես չեի ուզենա անդրադառնալ դրան: Այսօր մենք այդ 200 մլն դրամով սառցադաշտ ենք կառուցում սպորտդպրոցի համար, որը չի ունենալու ավելորդ ֆինանսական

ծախսեր, ֆինանսական խնդիրներ: Մարգարապրոցում կլինի ամենաժամանակակից մեթոդներով, փայտից ստացված սառույց, որն առանց հոսանքի պահպանվում է մեկ տարի շարունակ: Այդտեղ մենք ունենում ենք հոսանքի տնտեսում: Կունենանք ընդհանրապես պահպանման համար միանգամայն այլ ծախսեր և կունենանք շատ լավ սպորտդպրոց: Այդ սառցադաշտը Երևան քաղաքն անպայման ունենալու է, դրան զուգահեռ՝ զարգացնելու ենք ինչպես Կարապի լճի սառցադաշտի արդիականացման, այնպես էլ այլ բացօթյա սառցադաշտեր ունենալու հարցը: Այսինքն՝ այդ կուլտուրան, այդ մշակույթը Երևան քաղաքում արագ զարգանալու է: Իսկ այն հարցը, թե ով է փակել, ինչու է փակվել, հեռուստատեսությամբ էլ է ասվել: Նշեմ, որ անձամբ ես ընդունել եմ սպորտդպրոցի աշխատողներին, ծնողներին, խոսել եմ և՛ ծնողների, և՛ աշխատողների հետ: Ծնողներին հավաստիացրել եմ, որ անպայման սառցադաշտը վերականգնվելու է, բայց այդ նախնադարյան մեթոդով չի վերականգնվելու: Սառցադաշտը կառուցվել է կոմունիստների ժամանակներում, հնացած տեխնոլոգիայով, և այդ պատճառով ծախսերն այսօր եռակի անգամ շատ էին, քան իրականում անհրաժեշտ էր: Աշխատակազմը ուռճացված աշխատակազմ էր: Այն հարցը, որ Երևան քաղաքում սպորտդպրոցներն առանձնանում են, առանձին բաժին է ստեղծվում, պետք է ասեմ, որ նաև այդ պատճառով է: Երբ որ բաժինը վարչությունից առանձնացավ, մենք կողմ քվեարկեցինք, կան մարդիկ, որ քվեարկեցին դեմ: Բաժինն առանձնացվեց՝ հիմք ընդունելով նաև սառցադաշտի այսօրվա խաթարված կարգավիճակը, առանձնացվեց, որպեսզի Երևան քաղաքում սպորտդպրոցների նկատմամբ մոտեցումը փոխենք ու մեր երեխաների համար ունենանք ռեալ աշխատող սպորտդպրոցներ: Ես չեմ ուզում, որ իմ խոսքերը հնչեն որպես մեղադրանքներ: Երևան քաղաքի ենթակայության տակ սպորտդպրոցներն այսօր ստուգումների կարիք ունեն: Մեր վերահսկողականը սպորտդպրոցներում դրանով է զբաղված: Այն սպորտդպրոցները, որոնք ունեն լավ ապագա, մենք դրանց կօգնենք, որ աշխատեն: Այն սպորտդպրոցները, որտեղ բարեփոխումներ են անհրաժեշտ, անպայման կիրականացվեն, ոչ մի խնդիր չկա: Հարգարժան ավագանի, սառցադաշտը վերականգնվելու է, սպորտդպրոցը՝ նույնպես, աշխատակազմը քչանալու է: Առանց սառցադաշտի պահել դպրոց, որտեղ 85 մարզիչ ունենք, անիմաստ եմ գտնում: Բարեփոխումներ այդ դպրոցում կլինեն, և սառցադաշտի բացմանը մենք բոլորս ներկա կգտնվենք: Շնորհակալություն:

Գ. Գրիգորյան.

- Պարոն քաղաքապետ, եթե կարելի է, Ձեր խոսքը շատ համոզիչ էր, ես միայն մեկ բան կուզենամ հարցնել: Կա՞ ժամանակահատված, թե երբ պետք է այդ բոլոր գործունեությունը կատարվի և երբ պատրաստ կլինի:

Գ. Բեգլարյան.

- Այս տարի:

Գ. Գրիգորյան.

- Շնորհակալություն:

Գ. Բեգլարյան.

- Շնորհակալություն: Հաջորդը:

Տ. Մարգարյան.

- Ջիվան Պողոսյան:

Գ. Բեգլարյան.

- Խնդրեմ, Պողոսյան:

Ջ. Պողոսյան.

- Շնորհակալություն, հարցս վերաբերում է անշարժ գույքի վարչությանը: Հարգելի գործընկերներ, հողային ռեֆորմի և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 1991թ. որոշմամբ Հաղթանակ, Սիլիկյան և Չարբախ թաղամասերում կատարվել է հողաբաժանում, հողաբաժանմանը մասնակցել են բնակիչներ, որոնք ստացել են հողատարածք, գրանցել են այն հողաբաժանման մատյանում և հողի սեփականության ակտում, այսօր կոնկրետ Հաղթանակ թաղամասում առկա է հողի սեփականության ակտով չգրանցված մի քանի հարյուր միավոր: Այդպիսով պետական գրանցում չստանալը ոչ միայն անհարմարություն է պատճառում քաղաքացի սեփականատերերին, նաև քաղաքապետարանը զրկվում է գույքահարկի գանձման օբյեկտիվ հնարավորությունից: Ցանկանում եմ հարցնել՝ ինչո՞ւ հողահատկացման հիմքերը չեն վերականգնվում, չեն իրականացվում Հաղթանակ, Սիլիկյան և Չարբախ թաղամասերում՝ խոչընդոտելով և ոտնահարելով քաղաքացիների իրավունքները: Շնորհակալություն:

Գ. Բեգլարյան.

- Խնդրեմ, պարոն Ամյան:

Ա. Ամյան.

- Շնորհակալություն հարցի համար, շատ հետաքրքիր հարց է:

Տեղեկացնեմ, որ քաղաքապետի կողմից կայացվել են բազմաթիվ որոշումներ: Ձեր կողմից նշված բոլոր թաղամասերում կատարվել է հողահատկացման հիմքերի վերանայում, այսօրվա դրությամբ ընթացքում մենք ունենք որոշման նախագծեր, որոնք պետք է ներկայացվեն քաղաքապետի նշագրմանը: Այսինքն՝ այդ հարցը, ըստ էության, լուծված է: Քանի ամիս է արդեն՝ մենք այդ գործընթացն իրականացնում ենք, այդտեղ առանձին խնդիրներ կան կապված հողամասերի մակերեսների հետ, փաստաթղթերի հետ, որովհետև հիմնական մասն ստացել է պետական գրանցում, հիմնականում մնացել է այն մասը, որոնք ունեն խնդիրներ: Այսինքն՝ կա, որ հողահատկացում տրված է իր հատվածի վերաբերյալ, բայց փաստացի օգտագործվում է 3-4 անգամ ավելի: Բացի այդ, տեղեկացնեմ նաև, որ այդ դիմումները քննարկելու համար անհրաժեշտ է տեղագրական հանույթ հստակ սահմանանիշների տեղադրմամբ: Այսինքն՝ որպեսզի ճարտարապետություն և քաղաքաշինության վարչությունը կարողանա եզրակացություն տա, քաղաքացին պետք է ներկայացնի հստակ, թե որ հատվածի մասին է խոսքը գնում: Չգիտեմ տեղյակ եք, թե ոչ, քաղաքապետի կողմից հարյուրավոր որոշումներ են ընդունվել, ներկայիս գործող քաղաքապետի կողմից՝ իր պաշտոնավարման ընթացքում: Ընդամենը վերջին խումբը որոշումների տրվել է շաբաթ օրը, աշխատանքային օր էր, մոտ 5-6 որոշում քաղաքապետը նորից ստորագրել է:

Գ. Բեգլարյան.

- Շնորհակալություն: Հարցերի մեջ եթե կան պարոն Ամյանին ուղղված հարցեր, առիթը բաց չթողնենք: Ո՞վ հարց ունի այս վարչության հետ կապված: Խնդրեմ:

Ջ. Պողոսյան.

- Շնորհակալություն հարցի պատասխանի համար: Կուզենայի, որ ուղղակի երբ ժողովուրդը դիմում է կադաստր և մերժվում է, կուզենայի, որ աշխատանքային խումբը Ձեր ասած գեոդեզիայի, կոնկրետ համընդհանուր չափագրում աներ, որպեսզի ժողովուրդը կարողանար ընդհանուր դիմումներով գնալ կադաստր, համապատասխան թույլտվություն տրվեր ոչ թե անհատական կարգով, այլ համընդհանուր լուծում տրվեր:

Ա. Ամյան.

- Սա անհատական ակտ է, և գործող օրենսդրության համաձայն՝ քաղաքապետը պարտավոր է առանձին յուրաքանչյուրի մասով որոշում կայացնել: Այստեղ, ճիշտ էք ասում, խնդիր կա տարածքի տեղագնման և հանույթների պատրաստման վերաբերյալ, մենք հանձնարարություն ենք ստացել քաղաքապետի առաջին տեղակալի կողմից՝ բոլոր այն քաղաքացիները, որոնք նախկինում դիմել են քաղաքապետարան և չեն ներկայացրել, մենք յուրաքանչյուրի մասով տեղեկացրել ենք վարչական շրջանների միջոցով, որ ներկայացնեն, թե ինչ փաստաթղթեր է անհրաժեշտ: Համապատասխան ստորաբաժանման ղեկավարին հանձնարարվել է, որպեսզի մեկօրյա ժամկետում այդ տեղագրական հանույթները պատրաստվեն և այսօրվա դրությամբ այդ հարցը լուծված է, և ամենօրյա աշխատանք է տարվում: Շնորհակալություն:

Գ. Բեգլարյան.

- Շնորհակալություն, պարոն Ամյան:

Ես լրացնեմ, քանի որ սրանք խորհրդային տարիներին շրջանային խորհուրդների կողմից տրված որոշումներ են, դեպքեր ունենք, երբ կան կոնկրետ կեղծված փաստաթղթեր: Դատախազությունում գործեր ունենք, այդ պատճառով բոլորի վերաբերյալ միասին չենք կարողանա որոշում կայացնել: Բացի օրենքի սահմանափակումը, այդտեղ կշահեն նաև կեղծ փաստաթղթեր ունեցողները: Դեպքեր կան, որ հուշատախտակի որոշման տակ դրված է հենց այդ կարգի որոշում: Երբ նայում ենք արխիվը, բոլորովին այլ որոշում է կայացրել գործադիր մարմինը այն ժամանակ, իրենք այսօրվա պատճեններով ներկայացրել են թղթեր, որ դա հողի հատկացում է: Կան այս կարգի խնդիրներ, դրա համար ընդհանուր մոտեցմամբ չի կարելի այդ հարցը լուծել: Շնորհակալություն պարոն Ամյան: Հաջորդ հարցը:

Տ. Մարգարյան.

- Հարություն Կարապողոսյան:

Հ. Կարապողոսյան.

- Շնորհակալություն: Պարոն քաղաքապետ, ճիշտն ասած ես, հաշվի առնելով ժամանակի սղությունը և իմ հարցի ծավալները, հանում եմ հարցս, որպեսզի իմ Հանրապետական գործընկերները հնարավորություն ունենան հարցեր տալու: Շնորհակալություն:

Գ. Բեգլարյան.

- Շնորհակալություն: Հաջորդը՝ Արման Վարդանյան:

Ա. Վարդանյան.

- Ճիշտն ասած՝ պարոն Կարապողոսյանից առաջ ավագանին ևս մեկ հարց ուներ, թույլ տանք հնչեցնի, հետո ես կհնչեցնեմ:

Գ. Բեգլարյան.

- Այսինքն՝ Հանրապետականն էլի չօգտվեց: Խնդրեմ, հնչեցրեք: Ներկայացեք:

Ջ. Պողոսյան.

- Ճարտարապետական առաջադրանքի տրամադրման համար ժամկետը սահմանված է 20 օր, ինչպես նաև ՀՀ շինարարության թույլտվության կարգը հաստատելու՝ Կառավարության 2002թ. հ.93 որոշմամբ շինարարության թույլտվության տրամադրման ժամկետը սահմանվել է 10 օր: Երևանի ավագանու ԲՀԿ խմբակցությունը քաղաքացիներից ստացել է բազմաթիվ բողոքներ, որոնք վերաբերում են վերոհիշյալ որոշումների սահմանված ժամկետների խախտմանը: Քաղաքացիների բողոքներն են, որ իրենց բողոքները ոչ մի պատասխան չեն ստանում՝ ո՛չ դրական, ո՛չ բացասական: Հարցս հետևյալն է՝ ինչո՞վ են պայմանավորված ենթաօրենսդրական ակտի սահմանված ժամկետների խախտմամբ բազմաթիվ օրինակները: Շնորհակալություն:

Գ. Բեգլարյան.

- Պարոն Պողոսյան, ձեռագի՞ր էր գրված:

Ջ. Պողոսյան.

- Այո:

Գ. Բեգլարյան.

- Ճարտարապետության և քաղաքաշինության վարչություն:

Ա. Քասարյան.

- Ձեր հարցի վերաբերյալ ասեմ, որ ճարտարապետության և քաղաքաշինության վարչությունում նման ոչ մի ուշացած հայտ չկա: Եթե կան կոնկրետ դեպքեր, պատրաստեք քննարկելու: Միևնույն ժամանակ ասեմ, որ տրված հայտերի հետ բացակայում են փաստաթղթեր՝ տեղագրական հանույթ, սեփականատիրոջ համաձայնությունը և այլ իրավական ակտեր, որոնց վերաբերյալ գրավոր տեղեկացնում ենք քաղաքացուն: Մնացած դեպքերում ժամկետները պահպանվում են:

Գ. Բեզլարյան.

- Պարոն Պողոսյան, կա՞ն հարցեր:

Ջ. Պողոսյան.

- Այո, այստեղ իմ մոտ ես ունեմ ցանկ, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմից տրված, այդ ցանկով կան ուշացումներ, կարող եմ տրամադրել պարոն Քասարյանին:

Գ. Բեզլարյան.

- Շատ լավ կլինի:

Ջ. Պողոսյան.

- Շնորհակալություն:

Գ. Բեզլարյան.

- Պարոն Քասարյան, վաղը ինձ զեկուցեք, թե ինչի մասին է խոսքը: Շնորհակալություն: Հաջորդը՝ պարոն Վարդանյան:

Ա. Վարդանյան.

- Շնորհակալություն, ուրեմն մենք փորձեցինք հարցերի մինիմալ շեմը վերցնել, քանի որ հարցերը շատ էին, այսօր երկար չձանրաբեռնենք:

Առաջին հարցս մեջբերում եմ.

- Կառավարության 2001թ. հ.286 որոշման 49-րդ կետը՝ «Համայնքում հողամասերի վարձակալության, կառուցապատման իրավունքի տրամադրման համար համայնքի ղեկավարը ստեղծում է մրցութային հանձնաժողով, որի կազմում ընդգրկվում են համայնքի վարչակազմի համապատասխան մասնագետներ և ավագանու անդամներ: Հարցս հետևյալն է՝ ո՞րն է պատճառը, որ մինչ այսօր Երևան քաղաքի ավագանու ոչ մի անդամ ընդգրկված չի վերոհիշյալ հանձնաժողովի կազմում: Դա առաջին հարցն էր, մյուսը ուրիշ ոլորտի է վերաբերում: Շնորհակալություն:

Գ. Բեզլարյան.

- Պարոն Ամյան:

Ա. Ամյան.

- Հանձնաժողովը գործում է, հանձնաժողովի նախագահն է պարոն Արեյանը, հանձնաժողովի աշխատանքներին մասնակցում են և՛ քաղաքապետարանի աշխատակազմի ներկայացուցիչներ, և՛ կարող է մասնակցել ավագանու յուրաքանչյուր անդամ, բացի այդ, ներկայումս ընդունվել է քաղաքապետի

համապատասխան որոշում, համայնքային սեփականություն հանդիսացող գույքի օտարման նոր հանձնաժողով է ստեղծվել, որի կազմում ընդգրկվել են նաև ավագանու անդամներ:

Գ. Բեզլարյան.

- Շնորհակալություն: Այսինքն՝ կան ավագանու անդամներ:

Ա. Ամյան.

- Այո, կան երկու անդամներ:

Գ. Բեզլարյան.

- Ովքեր է՞ն

Ա. Ամյան.

- Արմեն Սահակյան և Մանվել Ավետիսյան: Մեկ հոգի Հանրապետական կուսակցությունից, մեկ հոգի՝ Բարգավաճ:

Ա. Վարդանյան.

- Ճիշտ ասած՝ առաջին անգամ ենք լսում դրա մասին, պարոն Սահակյանն էլ առաջին անգամ լսեց դրա մասին, բայց ոչինչ, ավագանին կարող է մասնակցել, պարզ է, ավագանին շատ բաների կարող է մասնակցել, բայց եկեք հասկանանք՝ ո՞ր ավագանին, քանի՞ հոգի և ինչպե՞ս: Եկեք նորմ վեցնենք, մինչև հիմա չենք արել, ոչինչ, որպես համերաշխության ակտ կարող ենք իրար նկատմամբ կատարել:

Ա. Վարդանյան.

- Հաջորդ հարցը ասեմ:

Երևանի քաղաքապետարանը կազմակերպում է մշակութային, առողջապահական, սպորտային և բազմաթիվ այլ միջոցառումներ, որոնց մասին Երևան քաղաքի ավագանին, չգիտես ինչու, տեղեկանում է զանգվածային լրատվության միջոցներից: Չէի ցանկանա այստեղ որևիցե ուրիշ այլ միտում տեսնել, ուղղակի հարցս ուղղեմ երևի ընթացակարգային մասի պատասխանատուներին. Երբևէ՞ Երևանի ավագանին ու ավագանու մասնագիտացված հանձնաժողովները պատշաճ տեղեկատվություն կսկսեն ստանալ միջոցառումների գրաֆիկի, անցկացման վայրի և այլ մանրամասների մասին՝ միջոցառումից առնվազն 3 օր առաջ:

Գ. Բեզլարյան.

- Պարոն Առաքելյան, դա օրենքով է ամրագրված:

Զ. Առաքելյան.

- Հատուկ այդպիսի միջոցառումների հետ կապված պահանջ չկա:

Գ. Բեզլարյան.

- Դա օրենքով է, պարոն Վարդանյան:

Ա. Վարդանյան.

- Ոչ, բայց քանի որ դա տրամաբանությամբ է, Երևանի ավագանին հանդիսանում է Երևան քաղաքի բարձրագույն իշխանություն, պետք է տեղյակ լինի՝ Երևանում ինչ է կատարվում, և ամենաքիչը կոռեկտ չի, որ մենք դա հեռուստատեսությունից ենք իմանում:

Գ. Բեզլարյան.

- Եթե մենք կոռեկտությունից ենք խոսում, ուրեմն քաղաքապետը և աշխատակազմը պարտավոր չեն իրենց մշակութային միջոցառումների մասին տեղեկացնել ավագանուն: Դրա համար ես հարց ուղղեցի իրավաբանին: Երևանի մասին օրենքում այդպիսի դրույթ չկա: Ինչ մնում է այսօրվա հարց ու պատասխանին, որն օրենքով է և շատ սպասված, ապա աշխատում ենք այդ ուղղությամբ: Եթե ես գնում եմ մի տեղ, հրավիրված եմ, օրինակ, Լևոն Իգիթյանի կողմից իր նախագծերը նայելու, իր սեփական ցուցահանդեսը դիտելու՝ հրավերքը քաղաքապետինն է և կոռեկտ չի կարող լինել, որ ես պետք է բարձրագույն մարմնին՝ ավագանուն, անպայման տեղյակ պահեմ:

Ա. Վարդանյան.

- Խոսքը լոկալ օրինակների մասին չէ:

Գ. Բեզլարյան.

- Հավատացե՛ք, որ հեռուստատեսությամբ լոկալ օրինակներ են ցուցադրվում, օրինակ՝ քաղաքապետի այցը որևէ ցուցահանդես:

Ա. Վարդանյան .

- Համաձայն չեմ դրա հետ:

Գ. Բեզլարյան.

- Դա Ձեր խնդիրն է, որ համաձայն չե՛ք: Հաջորդ հարցը:

Տ. Մարգարյան.

- Արմեն Ամիրյան:

Գ. Բեզլարյան.

- Խնդրեմ պարոն Ամիրյան:

Ա. Ամիրյան.

- Հարգելի քաղաքապետ, հարգելի գործընկերներ, ինձ գրավոր դիմել են Աջափնյակ համայնքի հ.50 մանկապարտեզ-դպրոց կրթահամալիրի ուսուցիչներն ու աշակերտների ծնողները՝ իրենց ստորագրություններով: Նրանք ահազանգում են, որ նշված կրթահամալիրը փակման վտանգի առջև է: Կցանկանայի տեղեկանալ՝

1. Արդյոք ճի՞շտ են ծնողների մտահոգությունները:

2. Եթե ճիշտ են, ապա կրթահամալիրի աշխատակիցներն արդյոք չե՞ն դառնալու գործազուրկներ:

3. Կրթահամալիրի փակումից հետո ինչպե՞ս կլինի դպրոցի 122 աշակերտների և 82 սաների ճակատագիրը և, ընդհանարպես, ինչի՞ց ելնելով է փակվում նշված կրթահամալիրը: Շնորհակալություն:

Գ. Բեգլարյան.

- Շնորհակալություն, տիկին Սողոմոնյան, համեցեք:

Գ. Սողոմոնյան.

- Շնորհակալություն հարցի համար, բայց, ներեցեք, հարցն ինքնին արդեն անհիմն էր: Նախ ասեմ, որ մանկապարտեզ-դպրոց կրթահամալիրը գործում է 2001 թվականից, տեղական ինքնակառավարման մարմինն է հիմնադիրը և ֆինանսավորվել է թաղապետարանից: Երևանի մասին օրենքով և նոր կառուցվածքով կրթահամալիրը պետք է ֆինանսավորվեր Երևանի քաղաքապետարանից: Քաղաքապետի 2010թ. փետրվարի 1-ի հ.25 կարգադրությամբ, Երևանի քաղաքապետի հանձնարարությամբ ստեղծվեց ուսումնասիրող հանձնաժողով, որի մեջ ընդգրկված էին նաև վարչական շրջանի կրթության բաժնի պետը և աշխատակիցները, ինչպես նաև կրթահամալիրի աշխատակիցները: Ուսումնասիրությունը կատարվեց համընդհանուր, և արդյունքում գրանցվեցին բազմաթիվ խախտումներ, որոնք սահմանված կարգով գրանցվեցին հանձնաժողովի կողմից: Դրանք վերաբերում էին և՛ ուսումնադաստիարակչական գործընթացին, և՛ մանկապարտեզում սանիտարահիգիենիկ ամենատարրական նորմերի բացակայությանը: Ես կարող եմ, պարոն քաղաքապետ, շատ ավելի մանրամասն ներկայացնել, եթե ունենք ժամանակ:

Մանկապարտեզում ծնողները վճարում են դպրոցի մասով՝ 5500 դրամ, մանկապարտեզում՝ 5000 դրամ: Դրան զուգահեռ՝ կրթահամալիրը նաև ֆինանսավորվում էր: Մանկավարժական համակազմում աշխատում են ոչ

մասնագիտական կրթությամբ ուսուցիչներ, ռազմագիտություն առարկան դասավանդում էր աշխատանքի ուսուցման ուսուցիչը, ավելին չասեմ հայոց լեզու և պատմություն առարկաների մասով, իսկ ինֆորմատիկան, որքան որ զարմանալի է, տեղեկատվական այսպիսի հրաշալի պայմաններում մայրաքաղաքում ինֆորմատիկան դասավանդում է պատմաիրավաբանական ֆակուլտետի շրջանավարտը: Ավելին, աշխատում են ուսուցիչներ, որոնք ընդամենը հեռակա ուսուցման 2-րդ կուրսի ուսանողներ են: Քննարկումը կատարվեց ուսումնասիրությունից հետո, և աշխատակազմի հետ իմ աշխատասենյակում, ինչպես նաև պարոն Արեյանի մոտ, ընդլայնված քննարկում կատարվեց: Արդյունքների մասին տեղեկացվեց Երևանի քաղաքապետին: Երևանի քաղաքապետը, հաշվի առնելով այն գործընթացը, որ ուսումնական է և դեռ 3 ամիս կա դպրոցի ուսումնական գործընթացի ավարտին, ինչպես նաև այն ցնցումները, որ կարող էին սպասվել կրթահամալիրում, որոնք վերաբերում էին և՛ ծնողներին, և՛ ուսուցիչներին, և չխաթարելու համար կրթահամալիրում բարոյահոգեբանական մթնոլորտը, Երևանի քաղաքապետը որոշում կայացրեց գործընթացին որևէ որոշում չտալ, ուսումնական գործընթացը շարունակել մինչև ուսումնական ավարտի վերջ, որից հետո քննարկումները կշարունակվեն և համապատասխան մոտեցում կդրսևորվի: Իսկ կրթահամալիրը մինչ օրս գործում է, երեխաները սովորում են, ֆինանսավորվում է և որևէ բողոք քաղաքապետարանի կրթության վարչությունը, համենայն դեպս, չի ստացել: Շնորհակալություն:

Գ. Բեգլարյան.

- Պարոն Ամիրյան, լրացում կա՞ :

Ա. Ամիրյան

- Ոչ, չունեմ: Շնորհակալություն:

Գ. Բեգլարյան.

- Շնորհակալություն:

Օրակարգում ևս մեկ հարց ունենք, պետք է դնենք քվեարկության: Մայիսի 7-ին ավագանու հերթական նիստ հրավիրելուն է վերաբերում:

Ովքե՞ր են կողմ, որպեսզի մայիսի 7-ին հրավիրվի ավագանու հերթական նիստ: Շնորհակալություն, բոլորը կողմ են, դեմ, ձեռնպահ չկա:

Շնորհակալություն աշխատակազմին, շնորհակալություն ավագանուն: Ցտեսություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝

Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ